ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

«ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի ութերորդ մասի 15-րդ կետի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 17.3 կետի 27-րդ ենթակետի, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 04.07.2018թ. թիվ 13/15-Լ որոշմամբ հաստատված «Հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգի» 12-րդ, 32-րդ, 34-րդ, 35-րդ, 39-րդ, 41-րդ, 58-րդ և 68-րդ կետերի պահանջները,

հաշվի առնելով ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Հաստատել «Անվճար իրավաբանական օգնության տրամադրումը կազմակերպելու մասին» կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի՝
   1) «Փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակին հասցեագրված դիմումների քննարկման և որոշումների հաշվառման մասին» կարգը հաստատելու վերաբերյալ 14.02.2014թ. թիվ 42-Լ որոշումը,
   2) «Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու վերաբերյալ դիմումների կատարման ընթացքը կազմակերպելու մասին» 21.01.2016թ. թիվ 12-Լ որոշումը:
3. Սահմանել, որ սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հոկտեմբերի 15-ից:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

28 սեպտեմբերի 2018թ.
թիվ 357-Լ
ք. Երևան